



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. մայիսին /վերլուծություն/

2003թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 5181 գործարքներ, որոնք 2002թ. մայիսի համեմատ նվազել են 5.9%-ով, իսկ 2003թ. ապրիլի համեմատ աճել՝ 4.2%-ով:

2003թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2385 օտարման գործարքների 92.5%-ը կազմել են առուվաճառքները, 6.8%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի

48.6%-ն արձանագրվել են Երևանում, իսկ 47.5%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. մայիսին 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 4.7%-ով, իսկ 2003թ. ապրիլի համեմատ նվազել՝ 4.3%-ով: 2003թ. մայիսին Երևանում անշարժ գույքի 1057 առուվաճառքի գործարքների 65.5%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: 2003թ. ապրիլի համեմատ Երևանում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.0%-ով, իսկ 2002թ. մայիսի համեմատ՝ 26.3%-ով:

2003թ. մայիսին Երևանում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. մայիսին համարժեք է 587.0 դրամի /

Համայքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.մայիս /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		մայիս 2003թ.	ապրիլ 2003թ.	մայիս 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	381.5	379.6	256.0
Արաբկիր	150.0-550.0	270.0	260.9	161.0
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	160.9	150.6	95.0
Նոր-Նորք	90.0-240.0	126.9	126.4	95.0
Ավան	90.0-190.0	126.4	119.2	85.0
Էրեբունի	90.0-300.0	137.5	132.7	86.0
Շենգավիթ	80.0-250.0	135.0	133.0	88.0
Դավթաշեն	100.0-250.0	162.9	157.1	92.0
Աջափնյակ	80.0-220.0	134.3	135.1	82.0
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	135.0	131.7	86.0
Նուբարաշեն	50.0-100.0	57.0	56.4	40.0
Երևան	50.0-970.0	166.1	162.1	106.0

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

2003թ. մայիսին Երևանում բազմաբնակարան բնակելի տների բնակարանների շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 2.5%, իսկ տարեկան աճը՝ 56.7%: Այսպիսով գների էական աճ չի նկատվում:

2003թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 334 բնակարաններ, որոնց քանակն ապրիլի համեմատ նվազել է 11.4%-ով, իսկ 2002թ. մայիսի համեմատ՝ 20.3%-ով: 2003թ. մայիսին, ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը,

վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.մայիս /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			մայիս 2003թ.	սպրիլ 2003թ.	մայիս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.2	62.0	56.6
	Ապարան	18.0-40.0	27.1	27.0	25.5
	Թալին	18.0-40.0	24.9	24.7	20.9
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.2	53.8	52.0
	Մասիս	20.0-90.0	54.3	54.0	48.4
	Վեդի	20.0-45.0	31.5	31.2	28.8
	Արարատ	22.0-40.0	31.4	31.2	26.9
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	83.8	83.0	71.6
	Արմավիր	21.0-58.0	45.5	45.0	41.5
	Մեծամոր	17.0-50.0	30.5	30.5	28.3
Գևարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	30.5	29.2
	Գավառ	20.0-45.0	30.1	30.0	28.9
	Մարտունի	18.0-38.0	29.3	29.1	27.8
	Վարդենիս	10.0-21.0	17.0	16.9	15.9
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	60.6	60.0	55.9
	Ստեփանավան	20.0-48.0	33.0	33.0	26.6
	Սյիտակ	17.0-30.0	23.7	23.6	21.4
	Ալավերդի	15.0-40.0	25.3	25.3	22.1
	Տաշիր	15.0-28.0	19.2	19.1	17.8
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	82.3	82.0	79.3
	Լոր Հաճն	35.0-75.0	51.7	51.3	50.1
	Բյուրևան	15.0-45.0	35.1	35.0	31.7
	Եղվարդ	28.0-55.0	40.2	40.0	35.6
	Հրազդան	18.0-45.0	30.5	30.0	27.1
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.2	75.0	74.9
	Չարենցավան	13.0-55.0	30.8	30.5	26.5
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	70.5	67.0	60.2
	Արթիկ	17.0-35.0	25.1	25.0	22.4
	Մարալիկ	15.0-33.0	23.4	23.2	23.4
Սյունիք	Գորիս	21.0-35.0	29.5	29.3	26.2
	Կապան	18.0-52.0	28.9	28.5	25.3
	Միսիան	17.0-37.0	27.4	27.2	22.5
	Քաջարան	13.0-30.0	18.2	18.2	13.6
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.2	35.0	30.8
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.7	46.1	43.8
	Ջերմուկ	18.0-55.0	40.9	40.5	37.6
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.0	36.0	30.7
	Իջևան	23.0-50.0	40.3	40.2	37.9
	Բերդ	15.0-43.0	29.0	28.9	26.4

2003թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել (աճը կազմել է 0.8 %), իսկ տարեկան աճը՝ 10.1%:

2003թ. մայիսին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 359 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 94, մարզերում միասին վերցրած՝ 265: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 23.4%-ով, այդ թվում Երևանում՝ 8.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 29.9%-ով: 2003թ. ապրիլի համեմատ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 5.0%-ով, ընդ որում Երևանում՝ 1.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 6.4%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. մայիսին անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. մայիս /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		մայիս 2003թ.	ապրիլ 2003թ.	մայիս 2002թ.
Կենտրոն	210.0-990.0	385.0	383.0	261.0
Արաբկիր	160.0-580.0	272.0	265.0	163.0
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	162.0	152.0	96.0
Նորք-Մարաշ	185.0-640.0	290.0	287.0	212.0
Ավան	95.0-200.0	128.0	121.0	87.0
Էրեբունի	95.0-320.0	139.0	134.0	98.0
Շենգավիթ	85.0-260.0	136.0	134.0	90.0
Դավթաշեն	105.0-260.0	164.0	158.0	95.0
Աջափնյակ	85.0-230.0	137.0	137.0	89.0
Մալաթիա-Մեքաստիա	95.0-250.0	136.0	133.0	91.0
Նուբարաշեն	55.0-110.0	58.0	58.0	42.0
<b>Միջինը Երևանում</b>	<b>55.0-990.0</b>	<b>182.5</b>	<b>178.4</b>	<b>120.4</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2003թ. մայիսին Երևանում անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.3%, իսկ տարեկան աճը՝ 51.6%: Այսպիսով գների էական աճ չի նկատվում:

Մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Սարգեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. մայիս /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			մայիս 2003թ.	սպրիլ 2003թ.	մայիս 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-110.0	82.2	81.9	75.2
	Ապարան	20.0-45.0	38.6	38.4	34.6
	Թալին	15.0-35.0	28.1	27.9	23.4
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	61.5	61.3	56.1
	Մասիս	27.0-80.0	62.4	62.0	60.8
	Վեդի	25.0-60.0	36.2	36.0	34.5
	Արարատ	25.0-60.0	37.3	37.0	34.3
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	88.6	88.0	84.7
	Արմավիր	35.0-90.0	52.0	51.8	47.3
Գևարքունիք	Սևան	25.0-60.0	36.3	36.2	33.5
	Գավառ	25.0-65.0	39.8	39.6	36.9
	Մարտունի	20.0-60.0	33.7	33.5	30.7
	Վարդենիս	15.0-45.0	21.1	20.9	19.0
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	67.8	67.1	63.8
	Ստեփանավան	20.0-50.0	33.1	32.8	31.8
	Մայիտակ	17.0-50.0	24.1	23.9	19.4
	Այվերդի	18.0-50.0	25.7	25.5	22.9
	Տաշիր	15.0-35.0	19.7	19.5	18.4
Կոտայք	Արովյան	40.0-110.0	91.7	91.0	86.7
	Նոր Հաճն	35.0-80.0	54.0	53.8	50.2
	Բյուրևան	15.0-50.0	38.1	38.0	32.9
	Եղվարդ	23.0-70.0	47.0	46.9	42.6
	Հրազդան	25.0-65.0	39.7	39.5	36.1
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.8	84.6	82.1
	Չարենցավան	25.0-50.0	33.2	32.9	28.9
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	89.6	88.7	85.4
	Արթինկ	18.0-60.0	28.5	28.2	24.6
	Մարայիկ	15.0-55.0	23.8	23.7	21.3
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.3	31.1	27.0
	Կապան	25.0-55.0	30.8	30.7	27.4
	Սիսիան	18.0-50.0	28.4	28.1	25.1
	Քաջարան	15.0-30.0	19.2	18.9	16.2
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.9	36.6	31.8
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.9	48.8	48.2
	Ջերմուկ	25.0-60.0	42.9	42.7	38.6
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.1	38.8	35.9
	Իջևան	30.0-70.0	40.9	40.7	39.5
	Բերդ	20.0-50.0	30.7	30.5	26.5

2003թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական էական աճ չի արձանագրվել (աճը կազմել է 0.6 %), իսկ տարեկան աճը՝ 8.7 %:

2003թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 495 գործարքներ /227.89 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում Երևան քաղաքում՝ 21.29 հա/: Հողի օտարման 249 գործարքներն /195.84 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 480-ը հանդիսացել են առուվաճառքի, 11-ը՝ նվիրատվության և 4-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 11 գործարքներում /2.3%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձինք:

2003թ. մայիսին 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ հողերի առուվաճառքների քանակն աճել է 2 անգամ, իսկ 2003թ. ապրիլի համեմատ նվազել՝ 12.7%-ով: Ընդ որում, 2003թ. մայիսին հողերի առուվաճառքներից 62-ը պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ իրականացվել են աճուրդների միջոցով, որից 52-ը բնակելի կառուցապատման /տնամերձ/, 7-ը գյուղատնտեսական, իսկ 3-ը հասարակական կառուցապատման հողեր են:

Ստորև ներկայացվել է 2003թ. մայիսին մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ՄՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր				գյուղատնտեսական նշանակության հողեր		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/	Քանակը	Մակերես /հա/
Երևան	0	0.00	36	2.18	19	6.19	0	0.00	53	5.66	12	7.26
Արագածոտն	0	0.00	1	0.10	0	0.00	30	14.55	13	0.81	0	0.00
Արարատ	2	14.60	0	0.00	0	0.00	63	18.53	14	1.37	1	0.01
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	37	34.67	12	1.15	0	0.00
Գևարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	4	52.95	1	0.06	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	17	13.70	2	0.27	0	0.00
Կոտայք	5	5.00	27	2.54	0	0.00	50	10.43	36	3.00	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	23	25.22	7	0.21	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	1	1.16	3	0.23	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	8	2.57	0	0.00	1	0.50
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.10	1	0.05	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>7</b>	<b>19.60</b>	<b>64</b>	<b>4.82</b>	<b>19</b>	<b>6.19</b>	<b>234</b>	<b>173.88</b>	<b>142</b>	<b>12.81</b>	<b>14</b>	<b>7.77</b>

2003թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 241, այդ թվում աճուրդ-վաճառքների 7 և դատարանի վճռով 6 գործարքներ (վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն), որոնց միջին պայմանագրային գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						29	12.02	840.0	7600.0	2360.0
Ծաղկահովիտ						1	2.53	170.0	2100.0	280.0
<b>Արարատի մարզ</b>										
Մասիս						8	2.26	400.0	3100.0	980.0
Վեդի						15	5.44	680.0	7200.0	1150.0
Արտաշատ	2	14.60	557.0	557.0	557.0	40	10.82	1040.0	6060.0	2050.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Վաղարշապատ						14	6.05	980.0	11150.0	2050.0
Արմավիր						10	7.93	650.0	4650.0	1230.0
Բաղրամյան						13	20.70	130.0	1000.0	380.0
<b>Գևարքունիքի մարզ</b>										
Վարդենիս						4	52.95	60.0	1180.0	230.0
<b>Լոռու մարզ</b>										
Ստեփանավան						3	1.94	180.0	4000.0	320.0
Այվերդի						6	3.59	360.0	5500.0	760.0
Սպիտակ						1	0.49	500.0	3300.0	1060.0
Տաշիր						1	5.22	100.0	350.0	230.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան						20	2.64	520.0	10100.0	3620.0
Եղվարդ	5	5.00	825.0	825.0	825.0	28	6.13	380.0	6100.0	2060.0
Հրազդան						2	1.66	250.0	4000.0	680.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						15	12.91	550.0	760.0	650.0
Ամասիա						2	8.85	80.0	250.0	210.0
Անի						6	3.46	240.0	310.0	260.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Միսիան						1	1.16	90.0	1500.0	210.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր						8	2.57	260.0	4000.0	800.0
<b>Տավուշի մարզ</b>										
Իջևան						1	0.10	530.0	4000.0	1200.0

2003թ. մայիսին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 117 առուվաճառքի գործարքներ, որից աճուրդ-վաճառքների 28 գործարքներ, որոնց միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին

Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1000.0	44.3	44.3	44.3	13	8120.0	120.0	3800.0	2270.0
Ապարան								120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Մասիս						8	7480.0	270.0	3680.0	830.0
Վեդի						2	2400.0	115.0	1000.0	500.0
Արտաշատ						4	3800.0	175.0	2460.0	650.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						8	6697.0	280.0	3700.0	1300.0
Արմավիր						3	3560.0	180.0	2440.0	650.0
Բաղրամյան						1	1200.0	120.0	280.0	200.0
Գևարքունիքի մարզ										
Մարտունի								120.0	320.0	225.0
Գավառ						1	600.0	180.0	1000.0	520.0
Սևան								120.0	280.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Լոռու մարզ										
Ստեփանավան						1	1890.0	78.0	340.0	140.0
Գուգարք								78.0	3800.0	580.0
Սպիտակ								78.0	450.0	160.0
Ալավերդի								78.0	440.0	200.0
Տաշիր						1	840.0	78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	8	6400.0	150.0	945.0	655.0	23	18173.0	180.0	4300.0	1520.0
Եղվարդ	19	19000.0	85.0	85.0	85.0	11	9980.0	180.0	3670.0	2020.0
Հրազդան						2	1800.0	180.0	4120.0	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						7	2078.4	120.0	2500.0	440.0
Անի								120.0	430.0	190.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Սյունիքի մարզ										
Միսիան						1	1330.0	78.0	450.0	230.0
Գորիս						2	920.0	78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	380.0
Մևրի								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր								78.0	990.0	290.0
Վայք								78.0	1000.0	205.0
Տավուշի մարզ										
Իջևան						1	500.0	78.0	1600.0	380.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0

Պետք է նշել, որ հանրապետությունում 2003թ. մայիսին գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող հողերի անհատույց տրամադրման 8 գործարքներ:

2003թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 511 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական



գրանցումների քանակի 9.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 35.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. մայիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 18.1%-ով, իսկ 2003թ. ապրիլի համեմատ աճել՝ 9.7%-ով:

2003թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 37 բնակարանների, 12 բնակելի տների, 104 հասարակական, 3 արտադրական նշանակության օբյեկտների, 1 ավտոտնակի և 354 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. մայիսին Երևանում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 84 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. մայիսի համեմատ, աճել են 61.5 %-ով, իսկ 2003թ. ապրիլի համեմատ նվազել՝ 14.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. մայիսին հանրապետությունում վարձակալվել են 3948.10 հա ընդհանուր մակերեսով հողեր /23.68 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 3902.86հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 2.34 հա նախկին պահուստային/, 8.14 հա բնակավայրերի, 13.41 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 2703.61 հա, որից 2693.21 հա գյուղատնտեսական նշանակության, առավել փոքր՝ Լոռվա մարզում՝ 1.77հա, որից 1.50 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների սահմաններից դուրս վարձակալվել են 2758.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. մայիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակներ /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսներ /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակներ /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսներ /հա/</i>
Արագածոտն	1	200.00	8	179.45
Արարատ	8	2438.00	61	255.21
Արմավիր	0	0.00	6	6.21
Գևարքունիք	0	0.00	22	293.50
Լոռի	0	0.00	1	1.50
Կոտայք	2	120.00	35	59.13
Շիրակ	0	0.00	22	323.50
Սյունիք	0	0.00	23	17.20
Վայոց Ձոր	0	0.00	11	9.17
Տավուշ	0	0.00	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>11</b>	<b>2758.00</b>	<b>189</b>	<b>1144.87</b>

2003թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 400 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.7%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. ապրիլի համեմատ նվազել է 3.4%-ով, իսկ

2002թ. մայիսի համեմատ աճել՝ 4.3%-ով: Ընդ որում, գրավադրման գործարքների 38.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /39.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /17.5%/, առանձնատների /13.8%/ և հողերի /23.5%/ նկատմամբ:

Երևանում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 191 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. մայիսի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2003թ. ապրիլի համեմատ աճել՝ 7.9%-ով:

2003թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 58.77 հա մակերեսով հողեր, որից 58.17 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 47.36 հա, որից 46.98 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.73 հա գյուղատնտեսական նշանակության հողեր Տավուշի մարզում:

2003թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 17 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5 %:

2003թ. ապրիլի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 29.4%-ով, իսկ 2002թ. մայիսի համեմատ՝ 40.0%-ով: 2003թ. մայիսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գևարքունիքի մարզում՝ 29.2% :

2003թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 715 գործարքներ, որոնց քանակը 2003թ. ապրիլի համեմատ նվազել է 9.5%-ով, իսկ 2002թ. մայիսի համեմատ աճել՝ 27.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.8%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.1%/:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***